Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը:

Հիսուս Քրիստոսն իր հրաշափառ հարությունից հետո 40 օր անցկացրեց իր աշակերտների հետ՝ պատմելով նրանց Աստծո արքայության մասին: Քրիստոնյաներիս համար ամենամեծ հրաշքը հարությունն է:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսը հարությունից անմիջապես հետո, մինչև համբարձվելը, շարունակեց հայտնվել իր աշակերտներին և նրանց ներկայությամբ հրաշքներ գործել: Իր աշակերտներին պատվիրեց մնալ Երուսաղեմում մինչև Պենտեկոստեի տոնը, ինչպես նաեւ հորդորեց, որ գնան և աշխարհին քարոզեն՝ առանց հեթանոսների և հրեաների միջև տարբերություն դնելու: Իր այս արարքով Քրիստոսն ուզում էր ցույց տալ, որ ինքը աշխարհ եկավ ամբողջ մարդկության համար՝ հավասարապես:

Նա առաքեալներին իշխանություն տվեց, որ գնան և սովորեցնեն իր մասին, և բոլոր նրանք որոնք կնդունեն Հիսուսին՝ մկրտեն նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Քրիստոսը նրանց պատվիրեց նաև մարդկությանը սովորեցնել այն ամենը, ինչ իրենք են սովորել Քրիստոսի հետ անցկացրած ժամանակ:

Հարությունից մինչև Համբարձում ընկած քառասնօրյա շրջանում բազում հրաշքներ տեղի ունեցան, որոնցից առաջինը Քրիստոսի հայտնվելն էր այն սենյակում, որտեղ հավաքվել էին իր աշակերտները: Առաքեալներից Թովմասը, ով մյուսների հետ չէր, երբ Քրիստոսը առաջին անգամ հայտնվեց աշակերտներին, չհավատաց հրաշքին և ասաց, որ անձամբ է ուզում տեսնել և շոշափել Քրիստոսի ձեռքերի մեխերի տեղերը:

Ութ օր հետո աշակերտները դարձյալ հավաքվել էին նույն սենյակում, և Թովմասն էլ նրանց հետ էր: Թեև դռները փակ էին, Հիսուսը հայտնվեց և կանգնեց նրանց մեջտեղը և ասաց՝ «Խաղաղություն ձեզ»: Ապա ասաց Թովմասին. «Բե՛ր քո մատը, դի՛ր այստեղ և տե՛ս իմ ձեռքերը. բե՛ր քո ձեռքը և դիպցրո՛ւ իմ կողին. անհավատ մի՛ եղիր, այլ հավատացյալ»: Թովմասը բացականչեց. «Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ»: Հիսուսը ասաց նրան. «Դու հավատացիր, որովհետև ինձ տեսար, չէ՞. երանի՜ նրանց, որոնք հավատում են առանց ինձ տեսնելու»: (Հովհ. Ի 20-29)

Հայ Առաքելական Եկեղեցու զավակները Թովմասի նման պետք է հավատան և ընդունեն Քրիստոսին առանց տեսնելու նրան, որովհետեւ Հիսուսը մեր մեջ է ամեն օր եւ ամեն վայրկյան: Մեր ամեն օրվա ապահովությունն ինքնին Աստծո և նրա Միածին Որդու Հիսուս Քրիստոսի օրհնության և ներկայության անհերքելի ապացույցն է: Անսասան լինենք մեր հավատի մեջ, և լինենք այն անձը, ով առանց տեսնելու Քրիստոսին՝ կհավատա նրա զորությանը:

Համբարձման տոնն այս տարի նշվում է մայիսի 18-ին: Ամերիկայի Արևելյան թեմի հայ եկեղեցիներից մեկը, որ գտնվում է Կոնեկտիկուտ նահանգի Թրամբըլ քաղաքում, նվիրված է Քրիստոսի Համբարձմանը և կոչվում է Սուրբ Համբարձման եկեղեցի: Ամեն տարի մեր Տիրոջ հրաշափառ Համբարձման տոնի Ս. Պատարագը մատուցվում է այս եկեղեցում, որին ներկա են լինում եկեղեցուն մոտ գտնվող նահանգների հոգևորականները և հավատացյալները: